՝22 Արմավիրի մարզպետ՝
պր. Է. Հովհաննիսյանին

Հարգարժան պարոն մարզպետ

Տեղեկացվում է Ձեզ, որ «Դողսի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ» և «Այգեշատի միջնակարգ դպրոցի ՊՈԱԿ» միացյալ կոլեգիալ կառավարման խորհրդ պետական ոչ առևտրային կազմակերպությունը տնօրենի թափուր պաշտոնի համար հայտարարվել է մրցույթ:

Մրցույթը կկայանա 2022 թվականի հոկտեմբերի 6-ին՝ ժամը 15[00]-ին:

Կից ներկայացվում են՝ բաղվածք կառավարման խորհրդի համապատասխան նիստի N 3 արձանագրությունից և հայտարարության տեքստը:

Առդիր՝ 2 թերթ :

Խորհրդի նախագահ՝ Մ. Մկրտչյան

07. 06. 2022 թ.

22 ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ 2-09709-2022
«08» 06 2022 թ.

«Դողսի միջնակարգ դպրոց» և «Այգեշատի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ների կոլեգիալ կառավարման մարմնի՝ միացյալ խորհրդի 2022թ. հունիսի 07-ի նիստի № 3 արձանագրությունից

Նիստը գումարվել է 2022թ հունիսի 07-ին:
Նիստին մասնակցում են խորհրդի 10 /տաս/ անդամները:

ՕՐԱԿԱՐԳ

1. «Դողսի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար մրցույթ անցկացնելու մասին

/զեկ. խորհրդի նախագահ՝ Մ. Մկրտչյան/

ԼՍԵՑԻՆ՝

Մ. Մկրտչյան ներկայացրեց, որ «Դողս միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի գործող տնօրեն Գոհար Ավետիսյանի պաշտոնավարման ժամկետը լրանում է 2022թ.-ի նոյեմբերի 1-ին:

Համաձայն ՀՀ Կառավարության 2010թ. մարտի 04-ի N 319-Ն որոշմամբ հաստատված պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգի երկրորդ կետի՝ այն է՝ Հաստատության կոլեգիալ կառավարման մարմինը՝ խորհուրդը (այսուհետ՝ խորհուրդ), տվյալ հաստատության տնօրենի պաշտոնավարման ժամկետը լրանալու օրվանից հաշված, առավելագույնը 70 աշխատանքային օր առաջ, բայց ոչ պակաս, քան 66 աշխատանքային օր առաջ (չներառելով ամառային արձակուրդի ժամանակահատվածը), ընդունում է տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար մրցույթ հայտարարելու մասին որոշում:

Հիմք ընդունելով վերոնշյալը, ինչպես նաև դպրոցական արձակուրդի ժամկետները՝

ՈՐՈՇԵՑԻՆ

1. «Դողսի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնի համար հայտարարել մրցույթ:
2. Մրցույթին մասնակցելու մասին հայտերն ընդունել www.azdarar.am կայքում հայտարարության հրապարակման օրվանից սկսած՝ 15 աշխատանքային օրվա ընթացքում:
3. Մրցույթն անցկացնել հայտերի ընդունման վերջին օրվանից հետո՝ 10-րդ աշխատանքային օրը՝ ժամը 15:00:
4. Խորհրդի որոշումը 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել ՀՀ ԿԳՄՍ նախարարին և ՀՀ Արմավիրի մարզպետին:
5. Տնօրենի պաշտոնի թափուր տեղի հավակնորդների հայտերն ընդունել «Դողսի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում և սույն գործընթացը վերապահել խորհրդի անդամ Անի Սահակյանին:

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Մանյա Մկրտչյան

ՀՀ Արմավիրի մարզի «Դողսի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կառավարման խորհուրդը հայտարարում է բաց մրցույթ՝ հաստատության տնօրենի թափուր պաշտոնի համար:

Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝
1. ՀՀ քաղաքացիությունը,
2. «Հանրակրթության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 17-րդ մասով սահմանված հիմքերի բացակայությունը:

Մրցույթին մասնակցելու համար պահանջվող փաստաթղթերն են՝
1. դիմում՝ հաստատության կառավարման խորհրդի նախագահի անունով,
2. ՀՀ քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը (բնօրինակի հետ),
3. հաստատության ղեկավարման իրավունքի (հավաստագրի) պատճենը (բնօրինակի հետ),
4. տվյալ հաստատության զարգացման ծրագիրը (որը հավակնորդը կարող է ներկայացնել մինչև գործերի ընդունման ժամկետի ավարտը, այդ թվում՝ էլեկտրոնային տարբերակով), որը խորհրդի որոշմամբ լիազորված խորհրդի անդամը հավակնորդի կողմից տրամադրելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է հրապարակման տվյալ դպրոցի պաշտոնական կայքում, ինչպես նաև տրամադրում է խորհրդի մյուս անդամներին,
5. ինքնակենսագրություն:
Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ: Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Փաստաթղթերն ընդունվում են 2022 թ. սեպտեմբերի 1-ից մինչև 2022 թ. սեպտեմբերի 22-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 09:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերից Դողսի միջնակարգ դպրոցում:

Մրցույթը տեղի կունենա 2022 թ. հոկտեմբերի 6-ին՝ ժամը 15:00-ին, ՀՀ Արմավիրի մարզի Դողսի միջնակարգ դպրոցում, հասցեն՝ գյուղ Դողս Շիրազի նրբ. 1:

Տեղեկությունների համար զանգահարել՝ 077-78-72-73, էլ.հասցե՝ doghs-dproc@mail.ru: